



ՊԵՏԱԿԱՆ ԱՊԱՐԱՏԻ ՉՏՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

(1929—1931 ԹԹ.)

Վ. Ե. ԴԱԼԱՔԵԱՆ

Մեր օրերում լայն հնարավորություններ են ստեղծվել Հայաստանի խորհրդային ժամանակաշրջանի պատմության բազմաթիվ հարցերի օբյեկտիվ ու անաչառ ուսումնասիրության համար: Սույն հոդվածում առաջին անգամ փորձ է կատարվում պետական ապարատի զտման պրոբլեմը քննարկել որպես ստալինյան բռնապետության ամրապնդման հիմնական եղանակներից մեկը:

1920-ական թվականների վերջերին խորհրդային Միության կառավարման համակարգում կատարվեցին կտրուկ քայլեր, որոնցից էին 1928—1929 թթ. խորհուրդների ընտրությունները և 1929—1932 թթ. պետական ապարատի ստուգման ու զտման լայնամասշտաբ կամպանիան: Համկ(բ)Կ XVI կոնֆերանսի (1929 թ.) որոշումներից երևում է, որ կառավարման մարմինների գործունեության վերակառուցումը պայմանավորված էր «մեծ բեկման» քաղաքականությամբ. «Ինդուստրացման արագ տեմպի իրագործման և գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման բնագավառում սովետական երկրի առջև դրված խնդիրների կատարումը պահանջում է պետական կառավարման ամբողջ ապարատի սիստեմատիկ վերակառուցում՝ մեր տնտեսության սիստեմին և սոցիալիստական շինարարության խնդիրներին համապատասխանեցնելու իմաստով»¹: Եթե նկատի ունենանք, որ շրջադարձային այդ կուրսի կենսագործումը հիմնավորված չէր², ապա ականհայտ է, որ նման քաղաքականությամբ պայմանավորված՝ կառավարման համակարգի բարեփոխմանն ուղղված քայլերը, որոնց թվում նաև ապարատի զտումը, չէին կարող արդարացված լինել: Բնականաբար, կառավարման մարմինների աշխատանքի բարելավման յուրաքանչյուր միջոցառում անհրաժեշտություն է, եթե այն բխում է հիմնավորված քաղաքականությունից և իրականացվում ընդունելի մեթոդներով: Տվյալ դեպքում, ինչպես նշվում էր XVI կոնֆերանսի որոշման մեջ, ապարատի թերությունների դեմ պայքարը «դառնում է դասակարգային պայքարի կարևորագույն ձևերից մեկը»³: Ելնելով չհիմնավորված այդ մոտեցումից, խնդիր էր դրվում կառավարման մարմինները զտել «քայքայված տարրերից, սովետական օրենքները խեղաթյուրողներից, կուլակների ու նէպմանների հետ միաձուլվողներից, քաջշուկի և այն քողարկողների դեմ մղու-

¹ Սովետական Միության կոմունիստական կուսակցությունը համագումարների, կոնֆերանսների և Կենտկոմի պլենումների բանաձևերում և որոշումներում (1898—1986), թարգմանված է ռուսերեն ինքնորոգ հրատարակությունից, հ. 4 (1928—1929), Երևան, 1987 (այսուհետև՝ ՄՄԿԿ-Գ բանաձևերում...), էջ 632:

² Մանրամասն տե՛ս «История опарта», М., 1989, с. 126:

³ ՄՄԿԿ-Գ բանաձևերում..., հ. 4, էջ 628:

վող պայքարի խանգարողներից, աշխատողների կենսական կարիքների նըկատմամբ մեծամտորեն, շինովնիկաբար, բյուրոկրատորեն վերաբերվողներից, վատնիշներին, կաշառակերներից, սաբոտաժնիկներից, վնասարարներից, ծուլներից»⁴։ Զտվողների համար սահմանվեց երեք կատեգորիա։ Առաջինի մեջ մտնում էին բացարձակ թշնամական տարրերը, որոնց գործունեությունն ուղղված էր խորհրդային իշխանության դեմ։ Այդ կատեգորիայով զտվածներն իրավունք չունեին աշխատելու որևէ հիմնարկում, թողակ կամ նպաստ ստանալու։ Երկրորդ կատեգորիայում ներառվում էին իրենց գործին կամ ընդհանրապես տվյալ հիմնարկության պահանջներին չհամապատասխանող աշխատակիցները, որոնք կարող էին աշխատել այլ բնագավառում։ Երրորդ կատեգորիայում նախատեսվում էին պատասխանատու աշխատանքի չհամապատասխանողները, որոնք կարող էին աշխատել ստորին պաշտոններում և այլ հիմնարկություններում։ Կարծում ենք, որ զտման կամպանիան ուղղված էր ոչ այնքան իրենց աշխատանքում թերացողների դեմ (կաշառակերներ, բյուրոկրատներ, ծուլներ, որն ինքնին կարող էր արդարացված լինել), այլև նախ և առաջ ուներ ընդգծված դասակարգային ուղղվածություն։ Շեշտը դրվում էր «կուլակներից ու նէպամանների հետ միաձուլվողներից», «սաբոտաժնիկներից» ու «վնասարարներից» ազատվելու վրա։

Զտման լայնամասշտաբ կամպանիան թելադրված էր այդ ժամանակաշրջանում կենսագործվող շրջադարձային կուրսով, որի դրսևորումներից էին նաև 20-ական թվականների վերջերին հին մասնագետների ու մտավորականության նկատմամբ կատարված անհիմն բռնությունները՝ «Շախտիի գործը» (1928 թ.), «Պրոմպարտիայի և Աշխատավոր գյուղացիական կուսակցության» դատավարությունները (1930 թ.)⁵։ ՀամԿ(բ)Կ Կենտկոմի և ԿՎՀ-ի ապրիլյան միացյալ պլենումում (1928 թ.) խոսելով «Շախտիի գործից» բխող գործնական հետևությունների մասին, Ստալինն ընդգծում էր. «Մենք ունենք ներքին թշնամիներ։ Մենք ունենք արտաքին թշնամիներ։ Այս մասին չի կարելի մոռանալ... և ոչ մի բան»⁶։

Երկրի առջև կանգնած դժվարությունները համարվում էին հետևանք զանազան «թշնամիների» գործողությունների, որոնց բացահայտումն ու ոչընչացումն էլ համարվում էր այդ դժվարությունների հաղթահարման հիմնական հղանակը (պատահական չէ, որ ստալինյան բռնապետության տարիներին լայն տարածում ստացան «դասակարգային թշնամի», «վնասարար», «սաբոտաժնիկ», «միջազգային իմպերիալիզմի գործակալ» և այլևայլ որակումներ)։ Իրականում Հայաստանում վնասարարությամբ զբաղվող կազմակերպություններ ու հին մասնագետներ չկային⁷։ Ավելացնենք, որ սարքովի մեղադրանքներով դատապարտվածներից շատերը մեր օրերում արդարացվել են⁸։

Եթե նկատի ունենանք, որ կառավարման մարմինների վերակառուցումը թելադրված էր «մեծ բեկման» խնդիրներով, իսկ զտման կամպանիան որպես այդ վերակառուցման իրականացման դիտավոր եղանակներից մեկը, որի հիմնական նպատակը ապարատից «վնասարարների», «սաբոտաժնիկների» և այլ

⁴ Նոյն տեղում, էջ 628—629։

⁵ *ՏԿՍ* Страницы истории советского общества. М., 1989, էջ 137. Историки спорят, էջ 185—186։

⁶ Ի. Ստալին, Երկեր, Բ. 11, էջ 65։

⁷ *ՏԿՍ* А. Григорянц, Формирование и развитие технической интеллигенции Армении. Ереван, 1966, էջ 118։

⁸ *ՏԿՍ* Суровая драма народа. М., 1989, էջ 378. Возвращенные имена. Книга пер. вая, М., 1989, էջ 237—263, книга вторая, М., 1989, էջ 273—301։

«Քայքայիչ տարրերի» քշելն էր, ապա կարելի է ենթադրել, որ Ստալինի և նրա մերձավոր շրջապատի վերջնական նպատակը սպարատից իրենց որդեգրած քաղաքականությունը հավանություն չտվող կամ այն մերժող ուժերից ազատվելն էր և նրանց փոխարեն այդ «նոր կուրսը» անվերապահորեն ընդունող ու հնազանդորեն կատարող կադրերին ասպարեզ դուրս բերելը: Դա Ստալինի ձեռագիրն էր և բնորոշ էր նրա գործունեությանը⁹: Այս ամենը ամրապնդվող վարչահրամայական համակարգին հատուկ կողմերից մեկը, այսպես կոչված, «հնազանդ պտուտակը» գործի գցելու քայլերից էր: Այն ենթադրում էր այդ համակարգի բնույթին համապատասխան ապարտում առաջ քաշել ոչ թե ինքնուրույն, մտածող, մասնագիտական պատրաստվածություն ունեցող ու գիտակ կադրերին, այլ հեշտ կառավարելի, հարմարվող, վերևի հրամաններն անվերապահորեն կատարող, գործի վարչարարական կողմով հրապուրվող ու հրամայել սիրող մարդկանց: Ավելացնենք, որ զտումից հետո առաջաքաշվածների մեջ կային նաև արժանի մարդիկ: Սակայն նրանք օբյեկտիվորեն «պտուտակի» դեր էին կատարում վարչահրամայական համակարգում, շատերը հավատում էին դրա ամենակարողությանը, խանդավառությամբ ու հրամայելու ուժով ցանկացած պրոբլեմ լուծելու հնարավորությանը: Այդ հավատն ու համոզմունքը օգտագործվում էր և նպատակաուղղվում նաև շփմնավորված խնդիրների իրականացմանը: Տողերիս հեղինակը բաժանում է այն տեսակետը, որ հին մասնագետների (որոնցից էին Ա. Չայանովը, Ն. Կոնդրատևը, Ա. Զելինցը) «առաջարկությունները կտրուկ տարբերվում էին միջոցներն անմտորեն փոշիացնելուց և ձախական հրահանգներից: Որակավորում ունեցող մասնագետները, շուկայական կոնյունկտուրայի գիտականները հարմար չգտնվեցին հրամայական տնտեսությանը, նրանցից շատերը հայտարարվեցին լրտեսներ, դիվերսանտներ և դատապարտվեցին»¹⁰: Ամրապնդվող վարչահրամայական համակարգի էությունը խորթ էին Ա. Չայանովի, Ն. Կոնդրատևի և բազմաթիվ այլ նշանավոր գիտնականների ու մասնագետների գաղափարները: Իսկ 20-ական թվականների վերջերին երկրի առջև կանգնած բարդ խնդիրների լուծումը անհրաժեշտ էր դարձնում կառավարման համակարգում ընդգրկել (և ոչ թե հեռացնել) մասնագիտական բարձր պատրաստվածություն ունեցող անհատներին, այլ ոչ թե «հնազանդ պտուտակի» դեր կատարող մարդկանց: Ստալինի և նրա մերձավոր շրջապատի կողմից ստեղծվեց մի իրավիճակ, երբ առկա պրոբլեմները լուծելու համար պարտադրվեց միանգամայն անընդունելի եղանակ՝ շատ դեպքերում ոչ թե գիտակ ու գործունյա կադրերի առաջաքշում, այլ առաջադրված «մեծ բեկման» կուրսն անվերապահորեն ընդունող, իրենց ընդունակություններով աչքի չընկնող մարդ-

⁹ Երբ հացամթերումների դժվարությունների կապակցությամբ 1928 թ. հունվար-փետրվար ամիսներին գտնվելով Սիբիրում Ստալինը հրամայեց հացի ավելցուկը պետական ցածր գներով չհանձնող գյուղացիներին համարել կուլակ, դատի տալ սպեկուլյացիայի համար ու հացը բռնագրավել (դա նշանակում էր հրաժարվել ՆԷՊ-ի ելակետային սկզբունքից՝ հիշեցնելով պարենամասնատրումը) և տեղի որոշ իրավաբաններ փորձեցին բացատրել այդպիսի քայլի անօրինակությունը, ապա Ստալինը սրահանջեց, որպեսզի «այդ պարոնները» մաքրվեն և փոխարինվեն ուրիշներով: Տե՛ս Բ. Ստալին, Երկեր, հ. 11, էջ 4: Դրանից հետո տեղական կուսակցական, խորհրդային, տնտեսական և դատական մարմիններից ամօգլածաբար հեռացվեցին առավել լրջախոճ, սկզբունքային ու համարձակ մարդիկ: Այս ամենի նպատակը քուլակներին բնորոշ հեղափոխական պարտքին անձնուրաց նվիրածությունը ղեկավարությանը շահախնդիր ծառայությամբ փոխարինումն էր: Տե՛ս Страны истории советского общества, էջ 135—136: Ավելացնենք, որ 1928 թ. հունվար-մարտ ամիսներին Ուրալում հեռացվեցին օկրուգային, շրջանային և գյուղակույն սպարառուներ 1157 ծառայողներ: Մանրամասն տե՛ս Уроки дает история, М., 1989, էջ 144—145:

¹⁰ «Страницы истории советского общества», с. 149.

կանց: Այդ տեսակետից, կարծում ենք, ընդունելի է պրոֆ. Ա. Բուսենկոյի այն թեզը, ըստ որի 20-ական թվականների վերջերին Ստալինի՝ իր անձնական իշխանությունն ամրապնդելու մտածված քաղաքականությունն իրականացման շրջանակներում առանձնացվում է նաև պետական ապարատի զտման կամպանիան¹¹: Ավելացնենք, որ «մեծ բեկման» կուրսին համապատասխան կառավարման համակարգը վերակառուցելու ստալինյան կոնցեպցիան պարզորոշ արտահայտված է նրա հետևյալ խոսքերում. «Պարտիան... լայն կամպանիա կազմակերպեց բյուրոկրատիզմի դեմ պայքարելու համար, լուգունգ տալով զտելու պարտիական, պրոֆեսիոնալ, կոոպերատիվ ու սովետական կազմակերպությունները խորք ու բյուրոկրատացած տարրերից» (ընդգծումը մերն է— Վ. Դ.)¹²:

Հայաստանում պետական ապարատի զտման կամպանիան սկսվեց 1929 թ. նոյեմբերին և շարունակվեց մինչև 1931 թ. վերջը (Միությունում՝ մինչև 1932 թ.): Զտման անհրաժեշտության պրոբլեմը քննարկելիս սկզբունքային նշանակություն ունի խորհրդային իշխանության նկատմամբ հին մասնագետների ու մտավորականության ունեցած վերաբերմունքի հարցը: Խորհուրդների 5-րդ համագումարում (1927 թ.) ժողկոմխորհի նախագահ Ս. Համբարձումյանը նշեց, որ «մեր խորհրդային ինտելիգենցիան շնչին բացառությամբ (նրկատի ունենանք, որ «շնչին բացառություն» որակումը ելնում էր ժամանակի չափանիշներից— Վ. Դ.) այսօր ևս առանց սաբոտաժի լծված է խորհրդային շինարարության գործին և ծառայում է բանվորին ու գյուղացուն»¹³: Համանման գնահատական տվեց նաև Կենտգործկոմի նախագահ Ա. Կարինյանը¹⁴: Խորհուրդների 6-րդ համագումարում (1929 թ.) ժողկոմխորհի նախագահ Ս. Տեր-Գաբրիելյանը, խոսելով մասնագետների օգտագործման մասին, ընդգծեց, որ «հնից ժառանգած մեր ինտելիգենցիայի ճնշող մեծամասնությունը լծված է սոցիալիստական շինարարության մեծ գործին»¹⁵: Հիշարժան է նաև համագումարում Ս. Տեր-Գաբրիելյանի արտահայտած հետևյալ միտքը. «Մենք չպետք է ասենք, թե մեզ մոտ Շախտի տիպի հակահեղափոխականներ չկան և հանգստացանք: Պետք է զգոն լինենք»¹⁶: Եթե նկատի ունենանք, որ միութենական մարմինների հրահանգների համաձայն զտման հիմնական նպատակներից մեկը ապարատից քայքայիչ տարրերի, սաբոտաժիկների ու վնասարարների հեռացումն էր (որն, ինչպես նշվեց, փաստորեն արհեստականորեն ստեղծված պրոբլեմն էր), իսկ նույնիսկ ժամանակի չափանիշներով Հայաստանում հին մասնագետներն ու մտավորականությունը «շնչին բացառությամբ առանց սաբոտաժի լծված էին խորհրդային շինարարության գործին» ապա ստացվում է, որ մեզանում նման կամպանիա անցկացնելու անհրաժեշտություն չկար: Միաժամանակ կարելի է ենթադրել, որ զոյություն ունեցող կառավարման կենտրոնացված համակարգի պայմաններում (նույնիսկ ցանկության դեպքում) տեղերում չէին կարող շիրականացնել կենտրոնից թելադրված հրահանգը: Ժամանակի դրոշմը կրող, կասկածի ու թշնամանքի մըթնոլորտում ընթացող, կամպանիոն բնույթ ստացած այդ միջոցառումն ար-

¹¹ Մանրամասն տե՛ս Ա. Բուսենկո, «Մեծ քեկման տարին»՝ ստալինյան հետադիմական շրջադարձ, «Մեկուկյան Երևան», 20. 10. 1988:

¹² Ի. Ստալին, Երկեր, Բ. 12, էջ 352:

¹³ Հայաստանի Արագոյն պատմության պետական կենտրոնական արխիվ (այսուհետև՝ ՀՆՊՊԱ), ֆ. 112, ց. 2, գ. 8, թ. 25:

¹⁴ Տե՛ս Առյուծ տեղը, ց. 8, գ. 7, թ. 9:

¹⁵ Նույն տեղում, գ. 14, թ. 78:

¹⁶ Հայաստանի Հանրապետության Քաղաքական-քաղաքական կազմակերպությունների փաստաթղթերի կենտրոնական պետական արխիվ՝ (այսուհետև՝ ՀՀ ՀԳՎԿՊԱ), ֆ. 1, ց. 9, գ. 6:

դեն իսկ իր բովանդակութեամբ ու ուղղվածութեամբ ծայրահեղութիւն լինելով, չէր կարող պատճառ շղատնալ ծայրահեղութիւնների, գործնականում շատանալ անընդունելի ձևեր: Ինչ վերաբերում է կամպանիայի մասին եղած փաստական նյութին, ապա անհրաժեշտ ենք համարել ներկայացնել հարցին վերաբերող երբեմն տարաբնույթ փաստաթղթեր, որպեսզի հնարավորին շահ առավել ամբողջական պատկերացում ստեղծվի քննարկվող պրոբլեմի վերաբերյալ՝ երբեմն վերջնական գնահատականներ տալու հնարավորութիւնը թողնելով ընթերցողին:

1931 թ. վերաբերող փաստաթղթերից մեկում դրականորեն էր գնահատվում զտման տեղական հանձնաժողովների մեծ մասի գործունեութիւնը և միաժամանակ նշվում դրանց մի մասի աշխատանքում եղած լուրջ թերութիւնների մասին. ա) ներկայացնելով կոնկրետ մեղադրանքներ, զտել են մարդկանց՝ նույնիսկ առաջին կատեգորիայով, բավարարվելով մերկ ձևակերպումով՝ «օտար տարր», «այլասերվել է», բ) աշխատակիցների մեծ մասին զտել են առանց բավարար նյութեր ունենալու, գ) Հայկինոյի ծառայողներից մեկին, որպես մութ անձնավորութիւն, զտել էին առաջին կատեգորիայով: Նույնիսկ զտող հանձնաժողովի նախագահը չէր կարողացել կենտրոնական հանձնաժողովում հիմնավորել այդ մեղադրանքը: Պարզվել էր, որ զտվողը բարեխիղճ աշխատակից է¹⁷: Հողժողկոմատի և նրան ենթակա կենտրոնական հիմնարկների զտմանը վերաբերող հաշվետվութիւններից մեկում նշվում էր, որ զտման ենթականերից համարյա բոլորի վերաբերյալ տարբեր նյութեր կային (մատերիալներ), որոնք, զտվողների ասելով, անձնական թշնամանքի արդյունք էին: Այդ նյութերը հանձնաժողովը ստուգում էր (հաճախ դրանք չէին ապացուցվում), որից հետո զտվողներն արդարացվում էին ու համարվում ստուգված: Զտման ենթակաների մասին ներկաները շատ դեպքերում արտահայտում էին իրարամերժ կարծիքներ, զանազան մեղադրանքներ, որոնք ընդունվում կամ մերժվում էին զտվողների կողմից¹⁸: Վերջիններիս ներկայացվող մեղադրանքները հաճախ այնքան շինծու էին, որ ստուգող հանձնաժողովներին բան չէր մնում անելու, դրանք արդարացնելուց բացի: Ավելացնենք, որ սարքովի մեղադրանքներով հագեցված փաստաթղթերը բազմաթիվ էին¹⁹: 1929 թ. աշխտողկոմատի ապարատի զտման ժամանակ մի շարք մարդիկ, որոնց վերաբերյալ նյութեր էին եղել և ներկաների կողմից մեղադրանքներ տրվել, հանձնաժողովի ստուգումից հետո արդարացվել էին²⁰: Հողժողկոմատի ապարատի զտմանը վերաբերող փաստաթղթերից մեկում նշվում էր. «Հողժողկոմատի անտառավարչութեան պետի տեղակալ, 40 տարվա անտառագետ, անկուսակցական, 1919 թ. 4 ամիս եղել է Հայաստանի Հանրապետութեան պարենավորման մինիստրի օգնական, դաշնակցական կուսակցութեան անդամ: Հրաժարվել է պաշտոնից և դուրս եկել կուսակցութիւնից՝ ավելի վաղ քան Քաջազունին համամիտ լինելով, որ դաշնակցութիւնն անելիք չունի: Եղավ խիստ դրական երկու ելույթ, որոնցից մեկը հողժողկոմ Ա. Երզնկյանը և թեկնածուն համարվեց ստուգված»²¹:

ԲԳՏ ժողկոմ Ա. Գալոյանը ՀԿ(բ) 8-րդ համագումարում նշեց, որ զտման ընթացքում մի շարք հանձնաժողովներ թույլ են տվել «բայլագյուղական սխալներ ու շեղումներ», որոնք կենտրոնի միջամտութիւնից հետո ժամանակին ուղղվել են. շրջաններում առաջին կատեգորիայով զտված 63 հոգուց

¹⁷ Տե՛ս ՀՆՊՊԿԱ, ֆ. 129, ց. 1, գ. 869, թ. 72:

¹⁸ Տե՛ս ՀՆՊՊԿԱ, ֆ. 129, ց. 1, գ. 865, թ. 1:

¹⁹ Տե՛ս Աույն տեղը, գ. 868, 870, 871 և աքճ:

²⁰ Տե՛ս Աույն տեղը, գ. 824:

²¹ Տե՛ս Աույն տեղը, գ. 865, թ. 3:

վերականգնվել էր 53 և հաստատվել միայն 10 մարդու վճիռը²²։ Կամպանիայի ուղղվածությունն ու մթնոլորտը պիտենալով կարելի է ենթադրել, որ այդ 10 հոգու վերաբերյալ նույնպես գործել է շինծու մեղադրանքներ ու պիտակներ կպցնելու տխրահուշակ մեխանիզմը։ Հարկ է նշել, որ նույնիսկ ժամանակի շահանիշներով սխալներ կարող էր թույլ տալ նաև հենց կենտրոնական հանձնաժողովը։ Ներքոհիշյալ փաստերը վերաբերվում են անհիմն կերպով զրտվածներին կենտրոնական հանձնաժողովի կողմից արդարացնելուն։ 1) մի դեբասանի զտել էին առաջին կատեգորիայով (որպես բացարձակ թշնամական թարր), որոշման մեջ նշելով. «Նկատի ունենալով նրա քաղաքական անգրագիտությունը, ծայրահեղ պասիվությունը սոցիալիստական շինարարության գործում, այն, որ նա չի ցանկանում պատրաստ գտնվել պաշտպանելու խորհուրդների երկիրն իմպերիալիստական հարձակումից, նրա աջ օպորտունիստական տրամադրության ցուցաբերումը, սիստեմատիկ հարբեցողությունը՝ անհրաժեշտ համարել նրան զտել 1-ին կարգով։ Սակայն հաշվի առնելով նրա երիտասարդությունը և բեմական աշխատանքը, պայմանական թողնել թատրոնում մի սեզոն ևս, եթե շուղվի, բոլորովին հանել խորհրդային ապարատից 1-ին կարգով»²³, 2) հանրային գրադարանի 1914 թ. ծնված աշխատակցուհուն զտել էին առաջին կատեգորիայով, քանի որ նա «Քաբքրել էր իր անցյալը»։ Մինչդեռ Հոկտեմբերյան հեղափոխության օրերին նա 3 տարեկան է եղել։ Կարծում ենք մեկնաբանություններն ավելորդ են։

ՀամԿ(բ) կենտկոմի զտման կապակցությամբ ընդունած որոշման մեջ նշվում էր, որ կամպանիայի հաջողությունը նախ և առաջ պայմանավորված էր դրանում աշխատավորության լայն ընդգրկմամբ²⁴։ Հատկանշանական է, որ հենց այս առումով էլ 1929—1932 թթ. կամպանիան սկզբունքորեն տարբերվում էր նախկինում կատարված ստուգումներից ու զտումներից։ Ղեկավարվելով վերոհիշյալ որոշմամբ՝ ՀԱՄՆ-ը բանվոր դասակարգին ուղղված դիմումում կոչ արեց ակտիվորեն մասնակցել զտմանը²⁵։ Այդ ծայրահեղ միջոցառումը մասսայականացնելու հիմնական նպատակն այն էր, որ բարդ ու տևական աշխատանք պահանջող հարցերը մեկ հարվածով լուծելու մտայնության պայմաններում երկրում կատարված պրոբլեմներով (որոնք արտահայտվում էին նաև կառավարման համակարգում) պայմանավորված հասարակության որոշ խավերի մոտ կուտակված անհանդուրժողականությունն ու դժգոհությունը օգտագործել քաղաքական նպատակներով։ Թվացյալ մասսայականության պայմաններում դյուրին էր քաղաքական խաղերում արդյունքի հասնել։ Արհեստականորեն ստեղծվել էր մի իրավիճակ, երբ եղած դժվարությունները վերադրվում էին «վնասարարներին», «սաբոտաժնիկներին» և այլևայլ «թշնամիներին» և բնականաբար դրվում էր նրանցից ազատվելու խնդիրը։

Կամպանիայի հենց առաջին օրերին զտող հանձնաժողովների աշխատանքներին ռկսեցին մասնակցել ձեռնարկություններում ստեղծված բանվորական բրիգադները։ Երևանում և Լենինականում կազմակերպվեցին այդպիսի 15 բրիգադներ, որոնք ամրացվեցին համապատասխան հիմնաբույսությունների։ Կարբիդի, փայտամշակման, մեխանիկական գործարանների և տպարանի բրիգադներն ամրացվեցին համապատասխանաբար ֆինժողկոմատին, պետբանկին, հողժողկոմատին և աշխժողկոմատին²⁶։ Բրիգադների գործունեությունը

²² Տե՛ս Ա. Գալոյան, ԿՎՀ—ԲԳՏ հաշվետվությունը, գեկուցում ՀԿ(բ) 8-րդ համագումարում, Երևան, 1932, էջ 51:
²³ Նույն տեղում:
²⁴ Տե՛ս «И правда», 7. VII. 1929:
²⁵ Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 6. VI. 1929:
²⁶ Տե՛ս ՀՆՊՊԱ, ֆ. 65, ց. 8, գ. 470:

քննելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ հանգամանքները. ա) Հայաստանում նման կամպանիա անցկացնելու անհրաժեշտություն չկար, բ) տվյալ հանգամանքներում գործել են համապատասխան մոտեցումներ ու շահաանիշներ, գ) ապարատի գործունեության բովանդակությանը, մեխանիզմին ու նրբբուխություններին բանվորների համարյա անտեղյակությունը՝ նրանց կուլտուրկրթական հայտնի մակարդակի պայմաններում, չէր կարող շանդրադառնալ զտման արդյունքների վրա, դ) ընդհանրապես կամպանիայի անցկացման ողջ մթնոլորտը, որն արտահայտվում էր նաև բանբրիգադների աշխատանքում: Վերջիններին գործունեությունը ժամանակի մամուլում և պաշտոնական փաստաթղթերում բարձր էր գնահատվում²⁷: Անդրադառնալով հողօղկումատի ապարատի զտման ընթացքում մեխանիկական գործարանի բանբրիգադի կատարած աշխատանքին՝ «Նորհրդային Հայաստանը» գրում էր, որ բրիգադի հետազոտության շնորհիվ բացահայտվել էին բյուրոկրատիզմի, խնամիության, անտնտեսվարության, քաշքշուկի և ֆինանսական խախտումների բազմաթիվ փաստեր, հիմնարկությունում անբավարար էր կուլտուրկրթական աշխատանքների վիճակը²⁸: Կամպանիայի ուղղվածությունն ու մթնոլորտը իմանալով կարծում ենք, որ այդ և նմանատիպ այլ փաստերի հավաստիությանը պետք է վերաբերվել որոշակի վերապահումով:

ՀԿ(բ)Կ 8-րդ համագումարում ԲԳՏ ժողկոմ Ա. Գալոյանը նշեց. «Ձտմանը բանվորական և աշխատավորական մասսաները հսկայական ակտիվություն են ցուցաբերել: Երևանում կենտրոնական ապարատների զտմանը մասնակցել է մոտ 100 հազար մարդ, իսկ շրջաններում (15) մասնակցողների թիվը կազմում է 65, 8938 հոգի, որոնցից ելույթ են ունեցել 7947 հոգի, իրենց այդ ելույթներով օժանդակելով զտման հանձնաժողովների աշխատանքներին»²⁹: Կամպանիայի, ինչպես նաև այս և արդեն հիշատակված համանման փաստերի նկատմամբ մեր ունեցած հայտնի դիրքորոշմամբ հանդերձ շենք բացառում, որ զտման ժամանակ բացահայտվեին ապարատում իրոք գոյություն ունեցող թերություններ: Սակայն, ինչպես նշվել է, կամպանիայի ընթացքում շեշտը դրվում էր «կուլակներից ու նեպանների հետ միաձուլվողներից», «սաբոտաժնիկներից» ու «վնասարարներից» ազատվելու վրա, խնդիր, որը մտացածին էր և փաստորեն նպատակաուղղված էր ստալինյան բռնապետության ամրապնդմանը:

Կամպանիայի արդյունքները³⁰ նույնիսկ պայմանականորեն ընդունելու պետքում երևում է, որ աշխատակիցների բացարձակ մեծամասնությունը զանազան տույժեր էին ստացել բյուրոկրատիզմի, անփութության, քաշքշուկի համար, իսկ առաջին կատեգորիայով զտվածները (այսինքն թշնամական տարրերը) կազմում էին ընդամենը 5,2 %³¹: ԲԳՏ ժողկոմատի հաշվետվության մեջ նշվում էր, որ Հայաստանում ապարատում եղած թշնամական տարրերը համեմատաբար քիչ էին³²: Հետևաբար անգամ ժամանակի շահաանիշներով նրանք փոքրաթիվ էին³³: Այս փաստը նույնպես ապացույց կարող է դառնալ

²⁷ Մանրամասն տե՛ս «Նորհրդային Հայաստան», 4. XII. 1929, 14, 21 I 1930 թ.: ՀՆՊՊԿԱ, ֆ. 128, ց. 1, գ. 1, թ. 18:

²⁸ Տե՛ս «Նորհրդային Հայաստան», 22. XI. 1929:

²⁹ Ա. Գալոյան, ԳԶՎ. աշխ., էջ 50:

³⁰ Մանրամասն տե՛ս Ա. Գալոյան, ԳԶՎ. աշխ., էջ 50—51, Ա. Խանջյան, ՀԿ(բ)Կ Կենտկոմի հաշվետվությունը 8-րդ համագումարում, Երևան, 1932, էջ 117—118:

³¹ Տե՛ս Ա. Գալոյան, ԳԶՎ. աշխ., էջ 50, Ա. Խանջյան, ԳԶՎ. աշխ., էջ 117—118:

³² ՀՆՊՊԿԱ, ֆ. 128, ց. 1, գ. 1, թ. 18, գ. 440, թ. 24:

³³ Կրկնում եմք, որ այդ որակումները պայմանավորված էին շրջադարձային քաղաքականությամբ: Նշեմք նաև, որ այդ տարիների մոտեցումներով եղել են նաև հիմնավոր-

զտման կամպանիայի արհեստական ու մտացածին լինելու վերաբերյալ:

Զտումը սերտորեն կապված էր առաջբաշման, ապարատի բանվորականացման խնդրի հետ: Հայաստանում զտվածների փոխարեն նոր կադրեր ունենալու նպատակով ծրագրվել էր 1929 թ. ամռանը պատրաստել 450 մարդ, որոնցից 375 արտադրության բանվորներ³⁴, Առաջբաշվողների համար 1929 թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին Երևանում, Լենինականում, Ալավերդիում և Ղափանում կազմակերպվեցին 6-շաբաթյա դասընթացներ³⁵: Նախատեսվում էր 450 առաջբաշվողներից զտման առաջին շրջանում աշխատանքի ուղարկել 200-ին, իսկ մյուսներին պահել ռեզերվում³⁶: Հայաստանում կամպանիայի ընթացքում առաջ քաշվեց 300 մարդ, որոնք հիմնականում բանվորներ էին³⁷: Ստորև կանդարդառանք զտման և առաջբաշման փոխհարաբերությունը: Նըշենք միայն, որ այդ ժամանակ թույլ տրված ծայրահեղություններն արտահայտվեցին անգամ ՀԿ(Բ)Կ 7-րդ համագումարին տրված Ա. Խանջյանի հաշվետվության հետևյալ տողերում. «ապարատի զտման ընթացքում միայն արհմիությունների գծով առաջքաշվեց 287 բանվոր: Հայաստանի պայմաններում սա բավարար երևույթ է: Մանավանդ, որ առաջխաղացված հետո շատ անգամ ստեղծվում է այնպիսի դրություն, որ գործարանում որակյալ բանվոր չի մնում (ընդգծումը մերն է— Վ. Դ.): Առաջիկայում պետք է մեծ ուշադրություն դարձնել առաջքաշվածների որակին և միաժամանակ այնպես առաջբաշել, որպեսզի արդյունաբերությունը չմնա առանց որակյալ ուժի»³⁸: Զտման և առաջբաշման փոխհարաբերության պրոբլեմին վերաբերող վերոհիշյալ փաստերը քննելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալը: Կամպանիայից հետո կատարված առաջքաշումները, որոնց հետևանքով Ա. Խանջյանի արտահայտությունները «շատ անգամ գործարանում որակյալ բանվոր չէր մնում», ընթանում էին ապարատից աշխատակիցների հեռացնելու պայմաններում: Մեր վկայակոչած փաստերը, ինչպես նաև զտման ուղղվածությունն ու ընդհանուր մթնոլորտը հիմք են տալիս պնդելու, որ անհիմն ձևով հեռացվել կամ զանազան տույժերի էին ենթարկվել իրենց գործին քաջատեղյակ բազմաթիվ անմեղ մարդիկ, որոնց փոխարեն եղել էին ոչ արդարացված առաջբաշումներ: Դա բացասաբար էր անդրադառնում և արդյունաբերության, և ապարատի աշխատանքի վրա: Բացի այդ, չի կարելի նույն հարթության վրա դնել ուսումնասիրվող ժամանակաշրջանին բնորոշ կառավարման մարմիններում ընդհանրապես բանվորների առաջբաշման գործընթացը (թույլ տրված ծայրահեղություններով հանդերձ) և ապարատում «վնասարարների» ու «սաբոտաժնիկների» հայտնաբերման լոգունգով ընթացած զտման հետևանքով այնտեղից անհիմն հեռացվածների փոխարեն բանվորների առաջբաշումը: Ավելացնենք, որ մասնագիտական կրթություն չունենալն ու կառավարման մարմիններում աշխատելու փորձի բացակայությունը հազիվ թե կարող էին համարժեքորեն փոխարինվել կարճատև դասընթացներում ձեռքբերված գիտելիքներով՝ մանավանդ բանվորների կուլտուր-կրթական հայտնի մակարդակի պայմաններում: Այսպիսի իրավիճակում ապարատի բանվորականացումը չէր կարող հանգեցնել դրա գործունեության բարելավմանը: Եվ փաստորեն ստեղծվել էր մի այնպիսի իրավիճակ, երբ

ված մեղադրանքներ, որոնք այսօր անընդունելի են: Ավելացնենք, որ չէր բացառվում նաև ապարատ իսկապես թշնամական տարրերի (ժամանակի չսփանդնողով) թափանցման հրճարարությունը: Տե՛ս Ա. Գալոյան, նշվ. աշխ., էջ 50:

³⁴ Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 31. VII. 1929:

³⁵ Տե՛ս ՀՆՊԳԿԱ, ֆ. 65, ց. 8, գ. 470, թ. 28:

³⁶ Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 23. VII. 1929 թ.:

³⁷ Տե՛ս ՀՆՊԳԿԱ, ֆ. 128, ց. 1, գ. 676, թ. 24, գ. 460, թ. 12:

³⁸ ՀՀ ՀՔԿՓԿՊԱ, ֆ. 1, ց. 10, գ. 4, թ. 54:

անհիմն ձևով հեռացված բանիմաց կադրերին փոխարինելն միզուցե և ազնիվ ու նվիրված, բայց գործին ոչ այնքան զիտակ կամ անտեղյակ, վերևի հրամաններն անվերապահորեն կատարող մարդիկ: Փաստերը ցույց են տալիս, որ դա հեռահար նպատակներ հետապնդող ու կանխամտածված քաղաքականություն էր: Այսպես, ՀԿ(բ)Կ Կենտկոմի և ԿՎՀ-ի 1931 թ. միացյալ պլենումը կոչ անելով ուժեղացնել պայքարն ընդդեմ «Ռասակարգային գծի աղավաղման փաստերի...», ընդդեմ կոնդրատականությանն ու վնասարարությանն», առաջարկում էր. «բ) սիստեմատիկ կերպով պետապարատ առաջ ֆաշելու նոր կադրեր բանվորներից (ընդգծումը մերն է— Վ. Դ.) ու կոլտնտեսականներից, գ) սիստեմատիկ մաքրել պետապարատն անհարազատ ու թշնամական տարրերից»³⁹: Ապարատի զտման ժամանակ «պարզվել էր», որ «մի շարք կոնդրատականներ և բանվոր դասակարգին անհարազատ տարրեր, որոնք խցկվել էին Պետպլանի ապարատը, ոչ միայն չէին օժանդակում մեր կուսակցության գծի անշեղ կիրառմանը, այլև ընդհակառակը՝ արգելակներ էին ստեղծում Երկրի սոցիալիստական զարգացման առաջ»⁴⁰ (ընդգծումը մերն է— Վ. Դ.): Վերոհիշյալ փաստերը քննարկելիս սկզբունքային նշանակություն ունի այն հանգամանքը, որ ինչպես նշվել է նախորդ էջերում, այդ տարիներին իրականացվող շրջադարձային քաղաքականությունը (որի արտահայտություններից էր զտման կամպանիան) հիմնավորված չէր: Ավելացնենք նաև, որ ժամանակի բազմաթիվ նշանավոր գիտնականների ու մասնագետների (Ն. Կոնդրատև, Ա. Զայանով, Ա. Զելինցև և ուրիշներ) գործունեության նախկին բացասական գնահատականը պատմագրության մեջ սկզբունքորեն վերանայվել է: Իրականում Հայաստանում «կոնդրատականներ», «վնասարարներ», «անհարազատ տարրեր» պիտակավորումներով կառավարման մարմիններից հիմնականում հեռացվել էին անմեղ մարդիկ (այդ թվում նաև կենսագործվող շրջադարձային կուրսին հավանություն չտվողներ), որոնց փոխարեն նշանակվել էին զլխավորապես այդ կուրսն անշեղորեն իրականացնող, հնազանդ, վերևի հրամաններն անվերապահորեն կատարող կադրեր: Ասվածը չի բացատրում, որ առաջաշվածների մեջ լինելն նաև արժանի մարդիկ, այդ թվում և բանվորներից: Բերված փաստերը ցույց են տալիս, որ 1929—1931 թթ. Հայաստանում անցկացված պետական ապարատի զտման կամպանիան պայմանավորված էր «մեծ բեկման» ստալինյան տխրահուշակ կուրսով: Այդ ընթացքում զանազան պիտակավորումներով կառավարման մարմիններից հեռացվեցին բազմաթիվ անմեղ մարդիկ, որոնք հիմնականում փոխարինվեցին բանվորներով: Այդ քաղաքականությունը նպատակաուղղված էր վարչահրամայական համակարգի ու Ստալինի անձնական իշխանության ամրապնդմանը:

В. Е. ДАЛЛАКЯН — Чистка государственного аппарата в Армении (1929—1931 гг.).—Проведенная в Армении в 1929—1931 гг. широкомасштабная чистка госаппарата была обусловлена осуществляемой в стране переломной политикой. Во время этой массивированной кампании под клеймом вредителя, саботажника и пр. из органов управления были уволены многие квалифицированные кадры, вместо которых на арену были введены не обладающие соответствующей квалификацией, знаниями, культурно-образовательным уровнем и опытом рабочие. Таким образом был сделан еще один шаг в направлении укрепления командно-административной системы и личной власти Сталина.

³⁹ ՀԿ(բ)Կ ԿԿԿ-ի և ԿՎՀ-ի միացյալ պլենումի քանձները, Երևան, 1981, էջ 46, 48:

⁴⁰ Ա. Փալոյան, Ըջվ. աշխ., էջ 40: